ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հատկացված լիցենզիաների հիման վրա 2010թ. գործել է 86 հեռուստաընկերություն, որից 42-ը՝ վերգետնյա եթերային, 1-ը՝ եթերամալուխային, 43-ը՝ մալուխային հեռարձակում իրականացնող: Նշվածներից 6-ը գործել է Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, որից 3-ը՝ եթերային, 3-ը՝ մալուխային, 27-ը՝ Երևան քաղաքի տարածքում, որից 13-ը՝ եթերային, 1-ը՝ եթերամալուխային, 13-ը՝ մալուխային, 53-ը՝ մեկ մարզի տարածքում, որից 26-ը՝ եթերային, 27-ը՝ մալուխային:

2010թ. ընթացքում ՀՀ-ում գործել է 20 ռադիոընկերություն, որից 3-ը՝ Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 14-ը՝ Երևան քաղաքի տարածքում, 3-ը՝ մեկ մարզի տարածքում:

ՀՀ-ում գործել են նաև Հանրային հեռուստաընկերությունը, Շիրակի հանրային հեռուստառադիոընկերությունը, միջպետական պայմանագրով հեռարձակվել են «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի, «ԿՈՒԼՏՈՒՐԱ», «ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» և «ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՁԻՆ ԱԼԻՔ» հեռուստաընկերությունների ծրագրերը:

Հանձնաժողովը իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով կատարել է երևանյան հեռուստառադիոընկերությունների եթերի 2280 օրերի տեսաձայնագրություններ, դրանց հետագա ուսումնասիրությամբ:

Մարզային հեռուստառադիոընկերությունների գործունեությունը վերահսկելու նպատակով տարվա ընթացքում իրականացվել է 15 ներհանրապետական գործուղում:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստառադիոընկերությունների փաստացի հեռարձակման հաշվառման մատյանների (գրանցամատյան) տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան: Իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում:

Իրականացվել է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչական տույժեր չեն կիրառվել:

Հանձնաժողովը 2010թ. հեռուստածրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 11 լիցենզիա է հատկացրել. «ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (12.03.2010թ.), «ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը՝ Արմավիր քաղաքի տարածքում (12.03.2010թ.), «ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊ ընկերությանը՝ Բյուրեղավան քաղաքի տարածքում (26.04.2010թ.), «ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (21.05.2010թ.), «ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (21.05.2010թ.), «ՆԱՏՆԵՏ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (28.09.2010թ.), «ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (28.09.2010թ.), «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում (14.10.2010թ.), «ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊ ընկերությանը՝ Վանաձոր քաղաքի տարածքում (07.12.2010թ.), «ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքի տարածքում (07.12.2010թ.), «ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊ ընկերությանը՝ Աշտարակ քաղաքի տարածքում (07.12.2010թ.):

Հաշվետու ժամանակահատվածում հեռուստածրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնելու լիցենզիա ստանալու դիմումներ չեն մերժվել:

Հանձնաժողովը 2010թ. վերաձևակերպել է «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերության Երևան քաղաքի տարածքում 104.9 ՄՀց հաճախությամբ ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիան (08.10.2010թ.)՝ գտնվելու վայրի փոփոխության կապակցությամբ, «ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊ ընկերության Սևան քաղաքի տարածքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիան (08.10.2010թ.)՝ գտնվելու վայրի փոփոխության կապակցությամբ, «ՔՅԱՎԱՌ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության Գավառ քաղաքի տարածքում 27-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիան (14.10.2010թ.)՝ գտնվելու վայրի փոփոխության կապակցությամբ, «ՎԻԳԵՌՈ» ՓԲ ընկերության Երևան քաղաքի տարածքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիան (22.12.2010թ.)՝ սփռման տարածքի փոփոխության կապակցությամբ:

Հիմք ընդունելով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դիմումները, Հանձնաժողովը երկարաձգել է «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ», «ԵՐԵՎԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԹԻ ՎԻ ՖԱՅՖ», ՓԲ ընկերությունների, «է.Վ.» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «Ա-ԹԻՎԻ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ», «ՍԻՆԵՄԱՔՍ», «ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությունների հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, «ԼՈՒՍԱԼԻՔ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ԼԱՍՏԻ ԽՈՒՏ», «ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՁՆԵՐ», «ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3», «Գ. Ա. Լ. ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ», «ՔԱՄՈՒՏ», «ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ», «ՖՈՐՏՈՒՆԱ», «ԻԶԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ», «ՑԱՅԳ», «ՇԱՆԹ», «ՔՅԱՎԱՌ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ԱՐՏԳԱՐ», «ԱԲՈՎՅԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ», «ՍԻՐԱԿ», «ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ», «ԹԵՎ», «ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊ ընկերությունների, «ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» և «ՌԱԴԻՈ» արտադրական կոոպերատիվների հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները մինչև 2015 թվականի հունվարի 1-ը և «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերության, «ՇԱՆԹ», «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ», «ԼՈՌՈՒ ՄԻԳ», «ՌԱԴԻՈ ՀԱՅ», «ՌԱԴԻՈ 107 ՖՄ», «ՌԱԴԻՈ ՎԱՆ», «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ», «ԱՐՋԱԳԱՆՔ ՍՏ.», «ՖՄ-105,5» ՍՊ ընկերությունների ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետները մինչև 2013թ. հուլիսի 20-ը:

Հանձնաժողովը «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի հիման վրա տվել է ոչ սեփական հեռուստահաղորդումները վերահեռարձակելու թույլտվություն (14.10.2010թ.):

Հանձնաժողովը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն հրապարակել է Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախությունների ամբողջական ցանկը:

Ստորև ներկայացվում է հեռուստառադիոհեռարձակման նպատակով ՀՀ-ում նախատեսված հաճախությունների ամբողջական ցանկի վերաբերյալ տեղեկատվություն.

Տեղեկատվություն հեռուստահեռարձակման նպատակով ՀՀ-ում նախատեսված կապուղիների վերաբերյալ

հ/հ	Սփռման տարածքը	Հատկացված հեռուստակապուղիների քանակը	Ազատ հեռուստակապուղիների քանակը
1	Երևան	23	0
2	Արագածոտն	19	4
3	Արարատ	18	2
4	Վայոց Ձոր	51	6
5	Գեղարքունիք	48	8
6	Լոռի	74	5
7	Կոտայք	37	6
8	Տավուշ	67	9
9	Արմավիր	8	2
10	Շիրակ	23	1
11	Սյունիք	87	7

Տեղեկատվություն ռադիոհեռարձակման նպատակով ՀՀ-ում նախատեսված հաճախությունների վերաբերյալ

հ/հ	Սփռման տարածքը	Հատկացված ռադիոհաճախությունների քանակը	Ազատ ռադիոհաճախությունների քանակը
1	Երևան	18	6
2	Արագածոտն	6	4
3	Արարատ	4	6
4	Վայոց Ձոր	6	16
5	Գեղարքունիք	9	8
6	Լոռի	10	12
7	Կոտայք	3	3
8	Տավուշ	9	9
9	Արմավիր	2	3
10	Շիրակ	8	1
11	Սյունիք	12	19
12	Հայաստանի Հանրապետություն	3	0

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախությունների ցանկում փոփոխություններ չեն կատարվել:

2010թ. ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 140699.8 հազար դրամ, որից 130896.8 հազար դրամ՝ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար, 9803.0 հազար դրամ՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար:

h/h	Հեռուստառադիոընկերության անվանումը	Հեռուստառադիոհաղորդում ների հեռարձակման համար պետական տուրքի վճար (դրամ)
1	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ	53200
2	«Ա.Լ.Մ.-ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	300000
3	«ՌԱԴԻՈ» ԱԿ	53000
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	203000
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ	20219000
6	«ԹԵԿ» ՍՊԸ	153000
7	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ	53000
8	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	153000
9	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ	53000
10	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	10203000
11	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	128000
12	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	118500
13	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	50000
14	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ	50000
15	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	50000
16	«ՔՅԱՎԱՌ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	63000
17	«ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	3000
18	«ՉԱՊ» ՍՊԸ	50000
19	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	100000
20	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	100000
21	«ԱՐՋԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ	104000
22	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ	100000
23	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	200000
24	«ՎԻԳԵՂՈ» ՓԲԸ	510000
25	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	103000
26	«ՀԱՅՐԵՆԻՔ- ԹԻՎԻ» ՍՊԸ	225000
27	«ՇԱՐԿ» ՍՊԸ	250000
28	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	178000
29	«ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	200 000
30	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	20200000
31	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	103000
32	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	50000
33	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	203000
34	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	56000
35	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	50000
36	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	50000
37	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	50000
38	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	50000
39	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	50000
40	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	100000
41	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	200000
42	«ԿԱԲԵԼ ՄԵԿ» ՍՊԸ	225000
43	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	200000
44	«Է3-ԱՓ» ՓԲԸ	306000
45	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	200000
46	«ԿԱԲԵԼԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	202000
47	«ԹԻ ՎԻ ՖԱՅՖ» ՓԲԸ	203000
48	«ՌԱՖՆԱՍ» ՍՊԸ	53000
49	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	50000

50	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	51000
51	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	53500
52	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	396000
53	«ՌԱԴԻՈ - ԱԼՖԱ» ՍՊԸ	30200
54	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	20303000
55	«ԵՐԵՎԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	10203000
56	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	203000
57	«Է.Վ.» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	203000
58	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	60000
59	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ	53000
60	«ՉԱԳԵՋՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	53000
61	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	200000
62	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	200000
63	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	20303000
64	«ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՁՆԵՐ» ՍՊԸ	53000
65	«Գ. Ա. Լ. ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ	53000
66	«ՍԻՆԵՄԱՔՍ» ՍՊԸ	203000
67	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	50000
68	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	52400
69	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	50000
70	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	1053000
71	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ	53000
72	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ	53000
73	«ՑԱՅԳ» ՍՊԸ	53000
74	«ԱԲՈՎՅԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	1038000
75	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	100000
76	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	488000
77	«ՖՄ-105.5» ՍՊԸ	103000
78	«ԱՐԱՑ» ՍՊԸ	100000
79	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	100000
80	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	3000
81	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	600000
82	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	600000
83	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	150000
84	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	600000
85	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ	103000
86	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	600000
87	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	600000
88	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	500000
89	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	100000
90	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	400000
91	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	100000
92	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	1000000
93	«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ	10000000
94	«ԱՐՓԱԻՆՖՈՐՄ» ՍՊԸ	1000000
95	«ՏԱՎՈՒՇ -ՏՎ» ՍՊԸ	1000000
96	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱՋԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	1000000
	ԸՆԴԱՄԵՆԸ	130896800

h/h	Հեռուստաընկերության անվանումը	Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար պետական տուրքի վճար (դրամ)
1	«Ա.Լ.Մ.-ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	400000
2	«ԿԱՅՄ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	400000
3	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	400000
4	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	400000
5	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	400000
6	«ՇԱՆԹ» ՍՊԸ	500000
7	«ՉԱՊ» ՍՊԸ	200000
8	«ՏԱՎՈՒՇ -ՏՎ» ՍՊԸ	200000
9	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	200000
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ	400000
11	«ԵՐԵՎԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	400000
12	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	500000
13	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	500000
14	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	500000
15	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	500000
16	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ	500000
17	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	200000
18	«ՇԱՐԿ» ՍՊԸ	400000
19	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ	400000
20	«ԱՌԱՁԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ	400000
21	«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ	400000
22	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	200000
23	«ԱԲՈՎՅԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	203000
24	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	200000
25	«ՉԱԳԵՋՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ	200000
26	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	200000
27	«ԱՐՓԱԻՆՖՈՐՄ» ՍՊԸ	200000
28	«ՑԱՅԳ» ՍՊԸ	200000
29	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	200000
	ԸՆԴԱՄԵՆԸ	9803000

2010թ. փետրվարի 15-ին Հանձնաժողովը ընդունել է «էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները»:

2010թ. մարտի 12-ին Հանձնաժողովը ընդունել է «Հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման կարգը»:

2010թ. հունիսի 10-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որն ուժի մեջ է մտել 2010թ. հունիսի 28-ին:

Հանձնաժողովը 2010թ. հունիսի 28-ին ընդունել է «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը», որն ուժի մեջ է մտել 2010թ. հուլիսի 12-ին:

2010թ. հուլիսի 20-ին և հուլիսի 27-ին Հանձնաժողովը հայտարարել է թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման 25 (համապատասխանաբար 18 և 7) մրցույթ, որից 6-ը՝ հանրապետական, 9-ը՝ մայրաքաղաքային, 10-ը՝ տարածքային սփռման:

Հանձնաժողովը 2010թ. օգոստոսի 4-ին ընդունել է «Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը», որն ուժի մեջ է մտել 2010թ. սեպտեմբերի 11-ին:

2010թ. հոկտեմբերի 27-29-ը Հանձնաժողովն անցկացրել է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների թվով 18, իսկ նոյեմբերի 3-ին՝ թվով 7 մրցույթ: Հանձնաժողովը համապատասխանաբար դեկտեմբերի 16-ին և դեկտեմբերի 23-ին՝ բաց վարկանիշային քվեարկությամբ, ըստ հայտերի ներկայացման հերթականության կատարել է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու թիվ 1-18 և թիվ 19-25 մրցույթների մասնակիցներից լիցենզավորված անձանց ընտրությունը:

2010թ. հունվարի 5-ին Ռ. Թորոսյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ նախընտրական քարոզչության կազմակերպման կարգը պահպանելու ուղղությամբ պարտավորությունների կատարմանը Հանձնաժողովին պարտավորեցնելու պահանջի մասին, որը մերժվել է ՀՀ վարչական դատարանի 2010թ. հունվարի 13-ին որոշմամբ:

ՀՀ վարչական դատարանի 2010թ. հուլիսի 14-ի վճռով մերժվել է նաև Ռ. Թորոսյանի՝ «ՀՌԱՀ-ի 15.01.2010թ. նիստի արձանագրության պատճենը չտրամադրելու պահանջի մասին» հայցը:

«ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-ն ՀՀ վճռաբեկ դատարան է ներկայացրել Հանձնաժողովի անգործությունը վիճարկելու, Հանձնաժողովի 13.10.2003թ. թիվ 75-Ա որոշումն անվավեր ճանաչելու, «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և արտոնագիր տալու որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին բողոքը, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 13.08.2010թ. որոշմամբ մերժվել է:

2010թ. դեկտեմբերի 21-ին Հանձնաժողով է մուտքագրվել «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-ի հայցադիմումը՝ մրցութային փաթեթների պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, սակայն ՀՀ վարչական դատարանի 2011թ. հունվարի 20-ի վճռով վարչական գործի վարույթը կարճվել է:

2010թ. ընթացքում Հանձնաժողովի գործողությունները /անգործությունը/ դատական կարգով վիճարկելու այլ դեպքեր չեն եղել:

2010 թ. Հանձնաժողովը ներգրավված է եղել ՀՀ նախագահի 2010թ. հուլիսի 15-ի ՆԿ-115-Ա կարգադրությամբ Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար ստեղծված պատասխանատու բանակցային թիմի, ինչպես նաև տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության խմբի աշխատանքներում:

2010թ. Հանձնաժողովը ներգրավված է եղել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի, ինչպես նաև ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներում:

2010 թ. Հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների հետ: Տեղի են ունեցել հանդիպումներ ԵԽ խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության, Եվրամիության եվրոպական հանձնաժողովի պատվիրակության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՀՀ գործող դիվանագիտական ներկայացուցչությունների, Իտալիայի տնտեսական զարգացման նախարարության հետ:

2010 թ. Հանձնաժողովը մասնակցել է ԵՄ երևանյան գրասենյակի, ԵԽ երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրմանն, Հայաստանում արտահայտման ազատության խնդիրներին առնչվող հանրային քննարկումներին:

2010 թ. Հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող Մարմինների Եվրոպական Պլատֆորմի (EPRA) 32-րդ աշնանային նստաշրջանին, որտեղ ՀՌԱՀ-ին շնորհվել է EPRA-ի լիիրավ անդամի կարգավիճակ:

2010 թ. Հանձնաժողովը մասնակցել է ԵԽ-ի կողմից կազմակերպված Հայաստանում արտահայտման ազատության խնդիրներին նվիրված խորհրդակցությանը, ինչպես նաև «Հարավկովկասյան ԶԼՄ-ներին աջակցություն» ծրագրի շրջանակներում համաժողովին:

Նշված ժամանակահատվածում ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել է 22 դիմում- բողոք, որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրության:

Հանձնաժողովը իրականացրել է իր գործունեության հետ առնչվող հարցերի լուսաբանումը հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, ինչպես նաև իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով վարել է www.tvradio.am կայքը:

Նշված ժամանակահատվածում հանձնաժողովը գումարել է 50 նիստ, որում ընդունվել է 126 որոշում (119 անհատական, 6 նորմատիվ, 1 լոկալ):

2010թ ընթացքում ՀՌԱՀ աշխատակազմը անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար 3 մրցույթ: 5 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են: 10 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են: ՀՌԱՀ աշխատակազմի 1 աշխատակցի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ: